

ՎԱԼԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎ

(Մենդյան 100-ամյակի առթիվ)

Բանասիր. գիտ. դոկտոր Ս. Կ. ԴԱՐՈՆՅԱՆ

1973 թ. դեկտեմբերին լրացավ ռուսականավոր բանաստեղծ, արձակագիր, քննադատ, դիտնական, հասարակական գործիչ, մանկավարժ Վալերի Յակովլևիչ Բրյուսովի (1873—1924) ծննդյան 100 տարին: Բարդ ճակատա-



գրի տեր այդ գրողը XX դարի սկզբներին ռուսական սիմվոլիզմի առաջնորդն էր, մի ուղղության, որն իր ազդեցությունն էր թողել ռուս բանաստեղծների ամբողջ սերնդի, այդ թվում նաև Ա. Բլոկի և Ա. Բեկի վրա, որոնք Բրյուսովին համարում էին իրենց ուսուցիչը: Հաղթահարելով իր աշխարհայեցության և ստեղծագործության հակասությունները, Բրյուսովը ռուս առաջադեմ մտավորականության մյուս ներկայացուցիչների նման ողջունեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, իսկ 1919 թ. մտավ կոմունիստական կուսակցության շարքերը և ակտիվորեն մասնակցեց նոր կուլտուրայի կառուցմանը:

Բայց նախքան այդ Բրյուսովը պետք է անցներ բարդ և հակասական ուղի՝ լի վերելքներով ու անկումներով, ուրախությամբ ու տրտմությամբ, կյանքի և արվեստի ճշմարտության որոնումներով:

1

Բրյուսովը հռչակված էր որպես «Ռուսաստանի ամենակուլտուրական գրողը»¹։ Գորկու տված այս բնորոշումը հաստատում է Ա. Վ. Լունաչարսկին՝ Վ. Յա. Բրյուսովի հիշատակին նվիրված հոդվածում. «Նա, անտարակույս, այն ժամանակի, ինչպես նաև մեր ժամանակի ամենակրթված ռուս գրողն էր»²։

Բրյուսովն ավարտել էր Մոսկվայի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը. նա հիանալի տիրապետում էր դասական և արևմտանվորուպական լեզուներին, ուներ այնպիսի էրուդիցիա, որով ապշեցնում էր ժամանակակիցներին։ Գիտելիքներ ձեռք բերելու նրա ծարավը, հիրավի, սահման չուներ։ Սակայն կասկածից վեր է, որ եթե Վ. Բրյուսովը օժտված չլիներ բանաստեղծական մեծ շնորհքով, ապա հազիվ թե դառնար ռուսական պոեզիայի մի ողջ ուղղության՝ սիմվոլիզմի առաջնորդը։ Դրա հետ մեկտեղ, Բրյուսովի ստեղծագործություններում անկարելի է չնկատել ինտելեկտուալ գերհագեցվածություն, կամ, ժամանակակից լեզվով ասած՝ «զիտական ինֆորմացիա» (հատկապես անտիկ աշխարհից, առասպելաբանությունից, Հռոմի և Հունաստանի մշակույթի պատմությունից, բիբլիական Արևելքից), որ հիմք էր տալիս համեմատել նրան Լոմոնոսովի և Պուշկինի հետ։ Բրյուսովը նրբորեն ըզզաց XX դարի զիտա-տեխնիկական առաջընթացի ուղղությունը և ձգտում էր արտացոլել այն իր պոեզիայում։ Այլ բան է, որ դա նրան միշտ չէր հաջողվում։ Նա ուրբանիստ-բանաստեղծ էր, մեր դարի ռուս քնարերգականների մեջ առաջինը, որ պատկերաց մեծ քաղաքը։ Բերևս սա է Բրյուսովի ամենամեծ ծառայությունը ռուսական պոեզիային։

Բրյուսովը զրականության մեջ ոտք դրեց XIX դարի 90-ական թթ.։ Այդ շրջանում նա հակված էր գեպի տարբեր ուղղությունների բանաստեղծները՝ Պուշկինն ու Լեմոնտովը, Նադսոնն ու Ֆոֆանովը, Ֆետն ու Տյուտչևը, Հայնենն ու հատկապես ֆրանսիական սիմվոլիստներ Վեռլենը, Բոդլերը և Մալլարմեն։ Վերջիններս հսկայական ազդեցություն ունեցան Բրյուսովի՝ որպես սիմվոլիստ-բանաստեղծի վրա։ Ստեղծագործության այդ սկզբնական շրջանում նա տպագրվում է «Ռուս սիմվոլիստներ» ժողովածուներում (1894—1895), լույս է ընծայում իր բանաստեղծությունների զրքերը՝ «Chefs d'œuvre» («Գլուխգործոցներ», 1895) և «Me eum esse» («Այդ ե՛ս եմ», 1897)։

Սիմվոլիզմը, որ ծնվեց Արևմտյան Եվրոպայում XIX դարի 90-ական թթ., տարածվեց նաև Ռուսաստանում։ Դա անհատական, անարխիստական բնավորում էր «համաշխարհային շարիքի»՝ բուրժուական հասարակության ղեկավարության և անհոգիության դեմ։ Սակայն այդ ընդվզումը, «ինքնին անկեղծ և բուռն, կտրված էր հեղափոխական ավանդներից և զուրկ՝ կոնստրուկտիվ հասարակական բովանդակությունից»։ Դեռ ավելին, նա «խախտում էր ոչ միայն հին աշխարհի քարացած հիմքերը, այլև... կազմակերպված դիմադրությունը այդ աշխարհին»³։

Գեղազիտական տեսակետից սիմվոլիզմի հիմքում ընկած էր սուրյնկտիվ-իմպրեսիոնիստական մոտեցումը արվեստին։ Մասնավորապես Բրյուսովը

¹ М. Горький, Собрание сочинений в 30 томах, т. 29, М., 1955, էջ 383։

² А. В. Луначарский, Собрание сочинений в 8 томах, т. 1, М., 1963, էջ 430։

³ Д. Максимов, Брюсов. Поэзия и поэтика, JL., 1969, էջ 23։

դտնում էր, որ սիմվոլիզմի խնդիրն է «սյուդիական մոտեցնել արդիականությանը», այսինքն՝ «աշխարհը պատկերել այնպես, ինչպես այն արտացոլվում է ժամանակակից մարդու հոգում»⁴։ Այդ տարիների իր բանաստեղծական դավանանքը Բրյուսովը հռչակել է «Պատանի սյուետին» (1896) հայտնի բանաստեղծության մեջ, որը հագեցված է նիցշեական և սակենտրոնությամբ, ծայրահեղ ղեկաղենատական անհատապաշտությամբ։

Հետաքրքրական է, որ այս տարիներին Բրյուսովը նույնիսկ բնությունը չէր ընդունում։ «Այդ և՛ ս և՛ մ» ժողովածուի մեջ մտած բանաստեղծություններից շատերը գրված են դեպի Կովկաս և Ղրիմ կատարած ուղևորության ժամանակ։ Պ. Պ. Պերցովին ուղղված նամակում (19 հուլիսի 1896 թ.) նա գրել է. «Երգվում եմ, Պյոտր Պետրովիչ, ես անսահմանորեն հիասթափված եմ... Ես նայում էի, և ասարդյուն կերպով իմ մեջ հիացմունք էի փնտրում։ Երկրորդական կարգի նկարիչն անգամ կարող էր ստեղծել հազարապատիկ ավելի վեհասպան չքնաղ, Լիբե կտավի ու ներկերի փոխարեն նրան տալին իսկական քարեր, ջուր, կանաչ։ Ես վիրավորված եմ բնության փոխարեն»⁵։ Եվ իսկապես, Բրյուսովի «կովկասյան» բանաստեղծությունները քիչ բանով են տարբերվում նրա «հյուսիսային» բանաստեղծություններից։ Պատահական չէ, որ «Այդ և՛ ս և՛ մ» ժողովածուի համար որպես բնաբան նա ընտրել է «Այն օրերի միայնությանը» բառերը։

Բայց արդեն այդ տարիներին Բրյուսովն զգում էր, որ իրականությունից հեռանալը՝ բացասաբար է անդրադառնում իր սյուդիայի վրա։ 1896 թ. նա օրագրում գրել է. «Ո՛ր ևս դո՛ւ, մուսա՛։ Ավա՛ղ, իմ նախկին մուսան մեռավ, իսկ նորը... ծածկեց դեմքը և լքեց ինձ՝ տեսնելով, թե ինչպես եմ քամահրում իր լավագույն պատվիրանները...»⁶։ Երկու դարերի սահմանադրխին նկատելի էր, որ նա հեռանում է ղեկաղենատական սյուդիայի ծայրահեղություններից, իսկ կյանքի հետ կապերն ուժեղանում են։

1900-ական թթ. ամենատրգասավորն էին Բրյուսովի ստեղծագործության համար։ Դրա ցայտուն արտահայտությունն են այդ տարիներին հրապարակված չորս ժողովածուները՝ «Tertia Vigilia» («Երրորդ պահակախումբ», 1900), «Urbi et Orbi» («Քաղաքին և Աշխարհին», 1903), «Stephanos» («Պսակ», 1906) և «Բոլոր Լուսնակները» (1909)։ Բրյուսովը զլխավորում էր սիմվոլիստների «Скорпион» հրատարակչության և «Весы» ամսագրի աշխատանքները։ Բանաստեղծն արժանանում է մեծ փառքի և ընթերցողների ու քննադատության լայն ճանաչման։ Նրան բարձր են գնահատում Մ. Գորկին և Ի. Բունինը, Ա. Բելին և Ա. Բլոկը։ Վերջինս նրան անվանում է «Պուշկինյան համաստեղության» բանաստեղծ⁷։

Զգտելով ստեղծել մոնումենտալ ոճի սյուդիա, Բրյուսովը դիմում է ռուս դոսականներին, և առաջին հերթին Պուշկինին։ 1904 թ. նա գրում է. «... Բմ սյուդիան ծնվել է Պուշկինի սյուդիայից»⁸։ Սակայն Բրյուսովի ստեղծագործական մեթոդը իր մեջ միավորում էր նաև այլ բանաստեղծական ոճեր՝ իմ-

⁴ Նույն տեղում, էջ 20։

⁵ Письма В. Я. Брюсова к П. П. Перцову (К истории раннего символизма), М., 1927, էջ 77։

⁶ Валерий Брюсов, Дневники. 1891—1910. М., 1927, էջ 26։

⁷ Александр Блок, Собрание сочинений в 8 томах, т. 5, М.—Л., 1962, էջ 616։

⁸ «Литературный архив», вып. I, М., 1938, էջ 302։

սյրեսիոնիստական տարրեր, սիմվոլիկա, ալլաբանություն, որոնք նրա հասուն շրջանի քնարերգության առանձնահատկությունն էին կազմում:

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Բրյուսովի մեջ հասունանում են խոռվարարական տրամադրություններ: 1899 թ. վերջին նա խոստովանում է. «Իմ մեջ կան ուղիներ, որոնց վրա ես հանդիպում եմ վաթսուհակնյա թվականների ծայրահեղություններին: Ես սիրում եմ նրանց խելահեղությունը և բոլոր կուռքերի տապալումը, ամեն տեսակ ազատությունների թուլատրումը»⁹: Իսկ հետագայում, իր «Համառոտ կենսագրության» (1924) մեջ նա հրապարտությամբ հիշում էր. «Հորս սեղանի վերևում մշտապես կախված էին Ջերնիշևսկու և Պիսարևի նկարները»¹⁰: Խոսելով Բրյուսովի «Քարտաշ» (1901) հուշակալոր բանաստեղծության մասին, քննադատներից մեկը նշել է, որ այդ բանաստեղծության տակ «նեկրասովն ուրախությամբ կստորագրեր իր անունը»¹¹: Հեղափոխական պաթոսով է ներթափանցված նաև Բրյուսովի «Դաշուն» (1903) բանաստեղծությունը, որ ներդաշնակ է կերմոնտովի համանուն գործին: 1905 թ. ռուսական հեղափոխության նախօրեին այդ բանաստեղծությունը հնչում էր որպես հզոր կոչ.

Պատյանից է փաշված, շողում է ձեր աչքում,
Անցյալ օրերի պես հեռանված և սուր:
Պոետը մաքրկանց հետ է, երբ հոգմն է աղմբկում,
Եվ հոգմն ու երգը միշտ զուգընկերներ են քույր:
(Թարգմ.՝ Ս. Ծարոնցի)

Սակայն Բրյուսովի դժբախտությունը նրանում էր, որ նա կապված չէր հասարակության գեմոկրատական ուժերի հետ, որոնք կարող էին սնել նրա տաղանդը, այդ պատճառով էլ «դաշունը» շողաց, բայց հարված չեղավ: Բրյուսովը չէր էլ ընդունում այն աշխարհը, որը նա համեմատում էր քարտաշի կառուցած բանտի հետ: Մերժելով բռնության ուժը, Բրյուսովի բանաստեղծական երևակայությունը ստեղծում էր իրականության իր իդեալը: Որպես «շինանյութ» նա օգտագործում էր անտիկ աշխարհի և Արևելքի առասպելները, հնագույն քաղաքակրթության երկրների՝ Հունաստանի և Հռոմի, Ասորեստանի և Եգիպտոսի, Բաբելոնի և Փյունիկիայի պատմության դեպքերն ու գեմքերը:

Պետք էր ունենալ զորեղ բանաստեղծական երևակայություն՝ հնագույն դարաշրջանների կերպարները վերածնելու և նրանց XX դարի մաքրկանց հետ խոսեցնել կարողանալու համար, ինչպես այդ արել է Բրյուսովն իր «Ասարհագոն» (1897) բանաստեղծության մեջ, որն ամփոփված էր «Երրորդ պահակախումբ» ժողովածուում: Դա բանաստեղծի ամենաուժեղ գործերից մեկն է, որը նրան իսկապես համաշխարհային հռչակ բերեց: Բրյուսովի բանաստեղծությունների հորելյանական ժողովածուի առաջաբանում Պավել Անտոկոլսկին «Ասարհագոնի» մասին գրում է. «Պուշկինից հետո ռուսական պոեզիայում առաջին անգամն էր, որ ժամանակակիցին հնագույն անցյալի կերպարի մեջ լիովին վերամարմնավորելու այդպիսի ունակություն էր գրանորվում»¹²: «Ասար-

⁹ «Звезда», 1938, № 7—8, էջ 256.
¹⁰ Վ ա լ ե ի թ ռ յ ո ս ո վ, Բանաստեղծություններ, կազմեց, ծանոթագրեց և խմբագրեց Սողոմոն Տարոնցի, Երևան, 1957, էջ 41:
¹¹ «Русь», 15 мая, 1904 г.
¹² Валерий Брюсов, Собрание сочинений в 7 томах, т. 1, М., 1973, էջ 14:

հաղոն» մոնումենտալ բանաստեղծությունը այսօր էլ ընթերցվում է որպես կրքոտ մենախոսությունը այն հերոսի, որը գիտակցել է երկրային իշխանությունից ցնորականությունը։ Դա մի մենախոսություն է, որը իր ողբերգական ուժով հավասար է Շեքսպիրի հերոսների մենախոսություններին։

Սակայն Բրյուսովի ստեղծած ուժեղ հերոսներն ու առասպելական պերսոնաժները (Ասարհադոն, Ռամզես, Մովսես, Ալեքսանդր Մակեդոնացի, Անտոնիոս և այլն) լուկ էսթետիկական առումով էին վեր կանգնած բուրժուական իրականությունից, այլ ոչ իրենց ներքին բովանդակությամբ, քանի որ բանաստեղծը իդեալականացնում էր հումանիստական էությունից զուրկ կերպարները։

Էսթետականացման սկզբունքն է ընկած նաև Բրյուսովի պոեզիայի երեք գլխավոր թեմաների հիմքում՝ քաղաքը, սերը, բնությունը։ Ժամանակակից մեծ քաղաքը նա պատկերում է իմպրեսիոնիստական ոճով, բայց նրա ուրբանիստական պոեզիայում կան նաև աշխատանքի մարդկանց կերպարներ (Քարտաշ, զործարանի բանվոր, լվացարարուհի և այլն)։ «Դժգույն ձին» (1903) բանաստեղծության մեջ Բրյուսովն ստեղծում է «Ապագայի քաղաքի» պատկերը՝ հրակայական, բազմահարկ, անվերջանալի մարդկային հոսանքով, աղմուկով ու ժխորով։

Բուրժուական գեեհկությունը Բրյուսովը հակադրում է սիրո պոեզիան, որի մեջ ընդգծում էր զղայական էությունը, ամենակուլ կիրքը։ Պատահական չէ, որ Ա. Բելին նրան անվանում էր «կրքի բանաստեղծ»¹³։ Կրքի այս պաշտամունքը նա հաճախ հասցնում էր բացահայտ էրոտիզմի։ Բրյուսովի սիրային լիրիկայում գերակշռում են ողբերգական երանգները։

1900-ական թթ. Բրյուսովը փոխում է իր վերաբերմունքը գեպի բնությունը, նրա մեջ տեսնելով քաղաքի անողորմությանը հակադրվելու միջոց։ Նրա բնանկարային քնարերգության մեջ գերակշռում են ընթերցողի վրա ներգործությունն ուժեղացնող էկզոտիկ գույները։

Աշխարհայացքի և ստեղծագործության սուր հակասությունները Բրյուսովին խանգարեցին ըմբռնել 1905 թ. հեղափոխության իմաստն ու բովանդակությունը։ Հեղափոխության մեջ նա տեսնում էր միայն ավերիչ ուժ, բայց ոչ ստեղծարար։ Այս մոտիվները հատկապես ուժեղ են «Գալիբի Հոներ» (1904—1905) և «Մերձավորներին» (1905) բանաստեղծությունների մեջ։ Վերջինը ավարտվում է «Մենք միասին կբանդենք, բայց՝ կառուցել՝ ո՛չ» տողով։ Այսպիսի գիրքորոշումը րստ էության անարխիստական էր։

Սրա հետ մեկտեղ, Բրյուսովի այս տարիների պոեզիայում ուժգնորեն հընչում են քաղաքացիական, ազատագրական գաղափարները։ «Բախտավորներին» (1904—1905) բանաստեղծության մեջ, որ գրված է Վերհարնի ազդեցության տակ, նա պատկերում է ասպագայի երկիրը, որտեղ՝

Ազա՜տ, հավասա՜ր, ձույլ ու սրտակի՛ց,

Որիև ձգտել է մեռ սերունդը հիմ,

Որիև չի հասել ո՛չ ոք մեզանից,

Ճաշակելու ևև նրանք լիովին։

(Քարգմ. Ս. Տարոնցի)

¹³ А. Б е л ы й, Луг зеленый, М., 1910, էջ 200։

Բրյուսովը հավատում էր մարդկության սոցիալական առաջընթացին, ուժին և բանականությանը: Հումանիստական պաթոսով ներթափանցված «Գովք Մարդուն» (1906) ներբողում բանաստեղծը մարդարևաբար կանխագուշակում էր մարդու թռիչքը տիեզերք:

Քաղաքակրթության վերընթաց զարգացման գաղափարով են ներթափանցված նաև Բրյուսովի «Հրեղեն հրեշտակ» (1907—1908) և «Հաղթանակի զոհասեղանը» (1911—1912) պատմական վեպերը, գրված ռեակցիայի տարիներին: Այս վեպերի հիմքում ընկած են Գերմանիայի XVI դարի և Հռոմի IV դարի պատմության և մշակույթի փաստերը:

1907—1910 թթ. տեղաշարժեր են նկատվում նաև Բրյուսովի գեղագիտական հայացքներում, նա քննադատաբար է վերաբերվում դեպի դեկադենտները: 1907 թ. Ս. Ա. Լյացկովին նա գրում էր. «...Թեև արտաքուստ ևս համարվում եմ նրանց առաջնորդը, ում, ըստ հին սովորության, անվանում են մեր դեկադենտներ, բայց իրականում նրանց մեջ ևս նմանվում եմ թշնամու ճամբարում գտնվող պատանդի: Վաղուց արդեն վճռականապես իմ դրական ընկերների սրտովը չէ այն ամենը, ինչ ևս գրում և ասում եմ, իսկ ինձ, պետք է խոստովանեմ, այնքան էլ դուր չի գալիս այն, ինչ գրում և ասում են նրանք»¹⁴: 1910 թ. «կրտսեր սիմվոլիստների» (Վ. Իվանով, Ա. Բելի, Ա. Բլոկ) հետ սկսված բանավեճում Բրյուսովը կտրականապես հանդես եկավ սիմվոլիզմի՝ որպես կրոնա-միստիկական արվեստի մեկնաբանության դեմ, և, փաստորեն, սահմանադատվեց մոդեռնիստական գրականությունից:

Բրյուսովի նոր գաղափարա-գեղագիտական դիրքորոշումը արտացոլվեց նրա «Ստվերների հայելին» (1912), «Ծիածանի յոթ գույները» (1916), «Վերջին Լրագներ» (1917—1919) ժողովածուներում, որոնք կազմում էին նրա ստեղծագործության շորրորդ փուլը: Նա հեռանում է սիմվոլիստական պոեզիայի վերացականությունից ու միստիկայից, իրականությունը հերոսականացնելու մեթոդից և ավելի ու ավելի հակվում դեպի դեղարվեստական մտքի հստակությունը և ոտանավորի բարձր կուլտուրան, որը նրան հարազատ էր դարձնում բանաստեղծական նոր դպրոցին՝ ակմեիզմին: Միայնության և հիասթափության նախկին մոտիվների հետ մեկտեղ Բրյուսովի քնարերգության մեջ հաստատվում է կյանքի ուրախությունը, գովերգվում է բնությունը վերավիժող մարդու աշխատանքը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Բրյուսովի ստեղծագործության մեջ տեղի է ունենում անկում, բանաստեղծը հոգեկան խոր ճգնաժամ է ապրում, որից դուրս է գալիս Մ. Գորկու օգնությամբ: Նա աշխատակցում է Գորկու «Летопись» ամսագրին, որը մերկացնում էր իմպերիալիստական պատերազմի հակամարդկային էությունը: Հենց այս տարիներին էլ թարգմանում է լատիշ և ֆինն բանաստեղծներին, պատրաստում «Հայաստանի պոեզիան» (1916) անթոլոգիան: Ականավոր բրյուսովագետ Դ. Կ. Մաքսիմովը գրում է. «Հայ ժողովրդի կենդանի ոգու հետ մերձենալը, հավանաբար, կարևոր ուղենիշներից մեկը հանդիսացավ այն ճանապարհի վրա, որը Բրյուսովին տանում էր դեպի գաղափարական նոր հորիզոնները և, վերջին հաշվով, դեպի հեղափոխությունը»¹⁵: «Հայաստանին» (1915) սքանչելի բա-

¹⁴ «Новый мир», 1932, № 2, էջ 191.

¹⁵ Д. Максимов, Брюсов. Поэзия и позиция, էջ 218.

նաստեղծության մեջ Բրյուսովը խոստովանում է, որ հին հայկական մշակույթի և հայ ժողովրդի հետ հաղորդակցվելը բուժեց իր «հոգու հիվանդությունները», աշխուժություն և ստեղծագործական բերկրանք ներշնչեց.

Բայց որտեղ շիրիմ որոնեցի ես՝
Լոկ աշխարհ գտա միշտ ստեղծարար...

Այդ ձայնն էր ո՛չ թե մեռած, հի՛ն ասի,
Այլ անմահ սիրո՛ւ լի ողջույնով ժիր.
Եվ դաշտերը մի որոտմունքով գիլ
Կոչ հղեցին ինձ խոր ու սրտագին,
Եվ կոչն այդ ահեղ ավետեց,—ապրի՛ր...

(Թարգմ.՝ Ս. Տարոնցի)

Բրյուսովը պատկանում էր այն ուսման մտավորականների թվին, որոնք գիտակցաբար ընդունեցին Հոկտեմբերյան հեղափոխությունը: «1917 թվականի հեղաշրջումը,— գրել է նա,— խորագույն հեղաշրջում էր նաև անձամբ ինձ համար...»¹⁶: Լուսաշարսկու հետ միասին Բրյուսովն աշխատում է Լուսժողովումատում, դասավանդում համալսարանում և Կոմունիստական ակադեմիայում: Նա Գրական-գեղարվեստական ինստիտուտի հիմնադիրն ու առաջին ռեկտորն էր: Ի դեպ, այդ ինստիտուտում է սովորել Եղիշե Չարենցը:

Հետհոկտեմբերյան շրջանում հրատարակվում են Բրյուսովի մի քանի ժողովածուները. «Այսպիսի օրերում» (1921), «Ակնթարթ» (1922), «Հեռաստաններ» (1922) և «Mea» («Շտապիր», 1924): Վերջինս լույս տեսավ հեղինակի մահից հետո: Նա փառաբանում է հեղափոխությունը («Ռուսիային», «Երրորդ աշուն», «Ռուսական ռևոլյուցիային»), սովետական մարդու ստեղծագործ աշխատանքը («Աշխատանք», «Աշխատանքի տոն»), եղբայրական հանրապետությունների բարեկամությունը և Սովետական Միության ժողովուրդների անխախտ միասնությունը («ՍՍՄԻ», «ՌՍՖՍՌ», «Մուրճ ու մանգաղ»): «Լենին» և «Լենինի մահից հետո» (1924) բանաստեղծություններով Բրյուսովը սքանչելի տողեր ներդրեց բանաստեղծական Լենինիանայում:

1923 թ. դեկտեմբերին նշվում էր Բրյուսովի ծննդյան 50-ամյակը: Մեծ թատրոնում կայացած հոբելյանական նիստում բոլշևիկ-բանաստեղծին ողջունեցին նաև Հայաստանի պատվիրակները: Կատարվեց Սայաթ-Նովայի մի երգը, որ թարգմանել էր Բրյուսովը, և ապա ի նշան հայ ժողովրդի անկեղծ երախտագիտության, գուսանը բանաստեղծի ոտքերի տակ դրեց պոեզիայի խորհրդանիշ քյամանչան: Հոբելյանական այդ օրերին Սովետական Հայաստանի կառավարությունը Բրյուսովին շնորհեց հանրապետության ժողովրդական բանաստեղծի կոչում: Նա առաջինն էր, որ արժանացավ այդ բարձր պատվին:

2

Բրյուսովին սիրո ոգեշունչ տողեր են նվիրել Հովհ. Թումանյանը, Հ. Հովհաննիսյանը, Վ. Տերյանը, Ալ. Շիրվանզադեն, Ե. Չարենցը, Ավ. Իսահակյանը: Նրա բանաստեղծությունները հայերեն են թարգմանել Վ. Տերյանը, Ս. Տա-

¹⁶ «Литературное наследство», № 27—28, М., 1937, էջ 472.

րոնցին, Վ. Նորենցը, Պ. Սևակը՝ Վերջին տասնամյակում Երևանը դարձել է բրյուսովագիտության կենտրոն մեր երկրում: 1962 թ. սկսած ավանդական են դարձել Հայաստանի մայրաքաղաքում անցկացվող «Բրյուսովյան ընթերցումներ»։ Երկու անգամ (1966, 1973 թթ.) վերահրատարակվել է «Հայաստանի պոեզիան» անթոլոգիան։ «Բրյուսովը և Հայաստանը» թեմային են նվիրված հայ մի շարք անվանի գիտնականների ուսումնասիրություններն ու հոդվածները։

Հրապարակված աշխատություններում մշակվում են այդ ընդարձակ թեմայի տարբեր կողմերը։ Այստեղ մենք կշռափենք քիչ ուսումնասիրված մի հարց՝ զրական կապերի խնդիրը Բրյուսովի՝ հայ զրականությանը, պատմությանը և մշակույթին նվիրված ուսումնասիրություններում։ Հետադոտությունը ցույց է տալիս, որ Բրյուսովը կիրառել է պատմա-համեմատական մեթոդը, որն այն ժամանակ համաշխարհային զրականագիտության առաջատար մեթոդներից մեկն էր։ Նա լավ ծանոթ էր Արևմուտքում և Ռուսաստանում այդ դպրոցի ականավոր ներկայացուցիչներին՝ Ի. Տենի, Ա. Զոպանյանի, Ա. Վեսելովսկու, Ա. Պիպինի, Ֆ. Կորշի աշխատություններին, և այս հանգամանքը, ինչպես կտեսնենք, իր կնիքն էր դրել Հայաստանի մասին Բրյուսովի զրած հոդվածներին վրա։

Դեռևս ուսանողական տարիներից Բրյուսովը հետաքրքրվում էր Բպուլիտ Տենի (1828—1893) գրվածքներով։ 1894 թ. օգոստոսի 6-ին օրագրում կատարած զրաուման մեջ նա քաղվածքներ է բերում Ի. Տենի «Քննադատական փորձերից», իսկ 1898 թ. հունվարի 29-ին, կարդացած զրքերի թվում նշում է Տենի «Անգլիական զրականության պատմություն» հայտնի աշխատությունը։ Հետաքրքրական է, որ դրա կողքին հիշատակվում է Գ. Վ. Պլեխանովի «Պատմության վերաբերյալ մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջը» աշխատությունը, որի մեջ քննարկվում է զրականության և արվեստի զարգացման պատմության վերաբերյալ Տենի կոնցեպցիան¹⁷։

Տենը առաջինն էր, որ զրականության պատմությունը դիտում էր որպես սոցիալական պատճառներով պայմանավորված պատմական պրոցես։

Տենի «Գեղարվեստի փիլիսոփայության» որոշակի ազդեցությունն զգացվում է հայ զրականության վերաբերյալ Բրյուսովի գրվածքներում։ Նա ևս հայ զրականության պատմությունը դիտում է որպես պատմական պրոցես, բայց խոսելով հայ ժողովրդական ոգու «երկմիասնության» մասին և նշելով, որ հայ ժողովուրդը «միաժամանակ և՛ ասիական է, և՛ եվրոպական», Բրյուսովը հակված է այս բիրտգիական, բնական գործոնին, ինչպես նաև Հայաստանի աշխարհազրական դիրքին («Եվրոպայի առաջապահ է Ասիայում») չափից ավելի մեծ նշանակություն տալու կողմը։ Այստեղից էլ բխում է հայկական մշակույթի մեջ «սինթեզի» կամ երկու էություն՝ «արևմտյանի և արևելյանի» առկայության մասին նրա տեսությունը¹⁸, որը գիտական զրականության մեջ լուրջ քննադատության է ենթարկվել։

Բրյուսովի գիտական հայացքների և հետաքրքրությունների ձևավորման գործում կարևոր դեր է ունեցել նրա ուսուցիչը՝ ականավոր ռուս գիտնական,

¹⁷ Валерий Брюсов, Дневники, էջ 18, 33։

¹⁸ Վ ա լ ե ռ ի Բ ռ յ ո ս ո Վ, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967, էջ 52, 53, 54։

ակադեմիկոս Ֆ. Ե. Կորշը (1843—1915)։ «Համառոտ կենսագրության» մեջ Բրյուսովը գրում է. «Պրոֆեսորներից (Մոսկվայի համալսարանի— Ս. Դ.) երախտագիտության մեջ հիշում Ֆ. Ե. Կորշին, որի հետ ծանոթ մնացի նաև հետագայում»¹⁹։ 1892 թ. Կորշը Հաղարյան ճեմարանի պրոֆեսոր էր։ Հայտնի են նրա մի շարք հայագիտական գործերը²⁰։

Հատկապես Կորշն էր, որ իր աշակերտի մեջ հետաքրքրություն առաջ բերեց դեպի լեզուների ու գրականությունների համեմատական ուսումնասիրությունը։ «Բանաստեղծի արհեստը» (1918) հոդվածում Բրյուսովը գրում է. «Համեմատական լեզվաբանության» կողքին պետք է գոյություն ունենա «համեմատական տաղաչափություն»։ Տաղաչափության համեմատական ուսումնասիրության վերաբերյալ հետաքրքիր գիտողություններ կան Հայաստանի պոեզիան» ժողովածուի ներածական ակնարկում. միահանգությունը հայ միջնադարյան և արաբական պոեզիայում (Բր. Նարեկացու նյութի հիման վրա), գաղել և ռուբայի բանաստեղծական ձևերը հայկական և պարսկական պոեզիայում (Քուչակի և Սալաթ-նովայի նյութի հիման վրա), տնատումը (ստրոֆիկան) Պ. Դուրյանի և Վիկտոր Հյուգոյի, Համարտինի մոտ, Վ. Տերյանի և ռուսական, ֆրանսիական բանաստեղծների կիրառած հանգը և այլն։

Իր ուսուցիչ Կորշից էր ժառանգել Բրյուսովը նաև սերը դեպի անտիկ աշխարհն ու Արևելքը, ինչը և հնարավորություն տվեց նրան այդքան լավ կողմնորոշվել հայ ժողովրդի պատմության և գրականության հարցերում, որոնք սերտորեն կապված են այդ երկրների մշակույթի հետ։ Իրավացի է Պ. Անտոկուսկին, երբ գրում է, որ Հայաստանի հետ հանդիպելով՝ Բրյուսովի մեջ «արթնացավ անտիկ աշխարհի գիտակն ու էստուդիաստը։ Հայաստանի հնագույն կապերը Հելլադայի և Հռոմի հետ կենդանացրեցին նրան և հիասքանչ բանաստեղծություններ ներշնչեցին»²¹։

Բրյուսովը առատորեն օգտագործում էր արևելյան մոտիվները, այնպես որ հայ գրականության ուսումնասիրությանը և թարգմանություններին ձեռնամուխ լինելիս նա արդեն նախապատրաստված էր դրան։ Հայաստանի պոեզիան նրա ստեղծագործական նախասիրությունների շարունակությունն էր։ Այդ մասին ինքը Բրյուսովը գրում է. «...Հայաստանի ուսումնասիրության մեջ ես գտա հոգևոր վսեմ ուրախությունների անսպառ աղբյուր, ...իբրև պատմաբան, իբրև գիտության մարդ, ես Հայաստանի պատմության մեջ տեսա մի ամբողջ ուրույն աշխարհ, որտեղ հազարավոր խիստ հետաքրքրական, բարդ հարցեր բորբոքում էին գիտական հետաքրքրությունս, իսկ իբրև բանաստեղծ, իբրև արվեստագետ, Հայաստանի պոեզիայում ես տեսա զեղեցկության նույնքան ուրույն մի աշխարհ, մի նոր, մինչ այդ ինձ անծանոթ տիեզերք, որտեղ փայլում ու շողշողում էին իսկական զեղարվեստական ստեղծագործության բարձր կերտվածքներ»²²։

Ինչ վերաբերում է հայ գրականության համեմատական ուսումնասիրությանը, ապա այդ ասպարեզում Բրյուսովն ուներ այնպիսի նախորդներ, ինչպիսիք էին՝ Ն. Մառը, Յու. Վեսելովսկին, Ա. Չուպանյանը, որոնց աշխատու-

¹⁹ Վ ա լ ե Ր ի Բ Ր Յ Ո Ս Ո Վ, Բանաստեղծություններ, էջ 42։

²⁰ Մանրամասն տե՛ս Н. К. Дмитриев, Ф. Е. Корш, М., 1962։

²¹ В а л е р и й Б р ю с о в, Собрание сочинений в 7 томах, т. I, էջ 25։

²² Վ ա լ ե Ր ի Բ Ր Յ Ո Ս Ո Վ, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, էջ 36։

թյունները նա բաղմիցս վկայակոչում է Հայաստանին նվիրված իր ուսումնասիրություններում²³։ Այդ հարցերին առանձնապես մեծ ուշադրություն է նվիրել Յուրի Վեսելովսկին։ Նա առաջինն էր, որ փաստական մեծ նյութի հիման վրա ցույց տվեց հայ զրականության և մշակույթի բաղմակողմանի միջազգային կապերը, սակայն չխուսափեց որոշ սխալներից և ծայրահեղություններից²⁴։ Արշակ Չոպանյանի մեջ Բրյուսովը տեսնում էր իրեն հոգեհարազատ բանաստեղծի ու քննադատի. երկուսն էլ ֆրանսիական պոեզիայի և մշակույթի կրթոտ երկրպագուներ էին։ Չոպանյանի մասին հիացմունքով էին արտահայտվում Անատոլ Ֆրանսը և էմիլ Վերհարները։ Բրյուսովն ուսումնասիրում էր հայկական պոեզիայի բաղմադարյան պատմությունը՝ հենվելով համեմատական զրականագիտության նվաճումների վրա, հաղթահարելով նրա սահմանափակությունը և քննադատորեն վերաբերվելով փոխառությունների տեսության որոշ դրույթներին։ Գրական կապերի խնդիրը նա լուծում էր երկու տեսանկյունից՝ ազդեցությունների և տիպաբանական անալոգիաների։

Ակադեմիկոս Ալեքսանդր Նիկոլաևիչ Վեսելովսկու և Ն. Յա. Մառի նման նա էլ ընդունում էր «հիմքերի» կամ «հանդիպակաց հոսանքի» տեսությունը, երբ «սեփականը» օրգանապես յուրացնում է «օտարը»։

Ազդեցությունների վերաբերյալ Վ. Բրյուսովը նույն կարծիքն է հայտնում, ինչ որ Ն. Մառը և Ա. Վեսելովսկին։ «Հայաստանի պոեզիան» ժողովածուի ներածական ակնարկում նա գրում է. «...Ոչ մի բարերար «ազդեցություն» չի կարող արվեստ ստեղծել այնտեղ, ուր դրա հատիկը չկա։ Որքան էլ պարարտացնեն ու ջրեն հողը, այնտեղ արտ չի հասկավորվի, եթե անհրաժեշտ սերմը չզգեն հողի մեջ»²⁵։ Այս հիմնական տեսակետից է մեկնում Բրյուսովը, երբ քննում է հայկական պոեզիայի վրա տարբեր ազդեցությունների հարցը։

Բրյուսովը նշում է, որ իր պատմության ողջ ընթացքում Հայաստանը շփվել է աշխարհի բաղմաթիվ երկրների ու ժողովուրդների հետ, որոնք այս կամ այն չափով իրենց ազդեցությունն են թողել նրա մշակույթի վրա. «...Հայաստանի բաղմապիսի պատմությունը, որ քսանհինգ դարերի ընթացքում միահյուսված է մեր աշխարհի բոլոր ժողովուրդների, ասորա-բաբելացիների, հին պարսիկների, նոր պարսիկների, արաբների, մոնղոլների, սելջուկյան ու օսմանյան թուրքերի, Նոր Եվրոպայի ժողովուրդների, ռուսների, մասամբ նաև Հնդկաստանի, Չինաստանի, Աֆրիկայի, Ամերիկայի բախտի հետ, այդ պատմությունը կենդանի ու հեռավոր արձագանքներով ապրում է հայ պոեզիայում»²⁶։

Բայց այս ընդհանուր մասսայից Բրյուսովն առանձնացնում է հայկական պոեզիայի վրա ներգործած մի քանի առավել զորեղ հոսանք՝ իրանականը,

²³ Ст. «Поэзия Армении», под ред. Валерия Брюсова, изд. 3-е, Ереван, 1973 («Библиография»); В. Брюсов, Летопись исторических судеб армянского народа, Ереван, 1940. Վ ա յ ե ռ ի Բ Ր Յ Ո Վ Ս Վ, Տարեգրություն հայ ժողովրդական պատմական ճակատագրեն, թարգմանեց ռուս ընդգրկեն 2. Մարդարյան, Վենետիկ, 1931։

²⁴ Ю. А. Веселовский, Очерки армянской литературы, истории и культуры, Ереван, 1972.

²⁵ Վ ա յ ե ռ ի Բ Ր Յ Ո Վ Ս Վ, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, էջ 84 (ընդգծումը մերն է—Ս. Գ.)։

²⁶ Նույն տեղում, էջ 39—40։

հելլենիստականը, սեմականը, ռոմանականը, գերմանականը և սլավոնականը: Միաժամանակ նա ընդգծում էր, որ «հայ պոեզիան ի մի վերցրած» միշտ էլ մնում է որպես «ժողովրդական ոգու հարադատ հայելի»²⁷։ Բանաստեղծը «միշտ երգում է իր ողջ հայրենիքի մեծ ցնծությունները և մեծ վշտերը, արվեստագետների ստեղծագործությունների մեջ միշտ մարմնավորված են հարադատ ժողովրդի ապրումները» և դա հայկական պոեզիան դարձնում է յուրօրինակ, ինքնատիպ-ազգային²⁸։

Հայկական ժողովրդական երգերում պարսկական և հելլենական ազդեցություններ նշմարելով, Բրյուսովը դրանք անվանում է «արվեստագետ ժողովրդի երգեր»²⁸։ «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսում նա առանձնացնում է թե՛ պարսկական էպոսի ազդեցությունը (Ռոստոմի կերպարը) և թե՛ ժողովրդական ասացողներից եկող ինքնատիպ գծերը: Բրյուսովը նշում է հույն դասական գրականության բարերար ազդեցությունը հայ հին գրականության և հատկապես Հոմերոսի ազդեցությունը Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վրա, որը սակայն չէր նսեմացրել հայ հեղինակի երկի ազգային էությունը:

Հանրահայտ է, որ Բրյուսովն առանձնապես բարձր էր գնահատում հայ միջնադարյան պոեզիան: «Հայկական միջնադարի քնարերգությունը, — գրում է նա, — հայ ժողովրդի բարձրագույն և ամենաինքնուրույն հուրիմվածքն է պոետական ստեղծագործության ասպարեզում»: Նա ուշադրություն էր հրավիրում այն բանի վրա, որ «հայ միջնադարյան քնարերգությունը համառյա ոչ մի կախում չունի» XIII—XIV դդ. արևմտաեվրոպական պոեզիայից, որը նոր էր ծնունդ առնում: Գրիգոր Նարեկացու երկերում և շարականներում արդեն Բրյուսովը տեսնում էր և՛ տան նրբագեղ կառուցում, և՛ նույն հանգի բազմիցս կրկնություն, «և՛ մանավանդ ներքին համահնչյունություններով, ասոնանսներով, ալիտերացիաներով ստացվող խոր խաղ, այն ամենը, ինչ սովորաբար վոխառություն է համարվում»²⁹։ Նա առանձնահատուկ ընդգծում է Նարեկացու բանաստեղծական արվեստը, որը մշակել է «հնչունագրությունը» շատ ավելի առաջ, քան դա ծաղկեց պարսկական և արաբական քնարերգության մեջ»³⁰։ Ու թեև հայ բանաստեղծներն ընկալել են Արևելքի բանաստեղծական որոշ ձևեր ու պատկերներ (ինչպես, օրինակ, գաղել, ռուբայի, վարդ և սոխակ), սակայն, Բրյուսովի բառերով ասած, նրանք «անսլացման պոեզիայի մեջ մտցրին մի նոր ողի, որը տարբեր է ղուտ «արևելյան» ստեղծագործության իշխող ոգուց. մերժեցին շափաղանցված գունագեղությունը, գույների անսանձ կուտակումը և պատկերների անսահման դիզումը, որ արևելյան պոեզիայի անհրաժեշտ հատկությունն է»: Բրյուսովը համակարծիք էր նրանց հետ, ովքեր գտնում էին, «որ հայ պոեզիան շատ ավելի պակաս է ենթարկվել Արևելքի ուղղակի ազդեցության, քան առաջ էին կարծում, որ Առաջավոր Ասիայի ամբողջ կուլտուրական աշխարհը, այդ թվում և հայերը, համատեղ են աշխատել ստեղծելու այն ոճը, որ բնորոշ դարձավ թե արաբների ու պարսիկների քնարերգության, թե միջնադարի հայ պոեզիայի համար»³¹։

27 Նույն տեղում, էջ 39:

28 Նույն տեղում, էջ 72:

29 Նույն տեղում, էջ 82—83:

30 Նույն տեղում, էջ 78:

31 Նույն տեղում, էջ 83:

Եվ այսպես, արևմտյան պոեզիան դեռ չէր կարող ազդել միջնադարյան հայ պոեզիայի վրա, իսկ պարսկականը և արաբականը՝ հայ պոեզիայի հետ միասին մասնակցություն էին ունենում այն ժամանակաշրջանի միասնական բանաստեղծական ոճ ստեղծելու գործին։ Եվ Բրյուսովը, հայկական միջնադարյան պոեզիայի դարգացման օբյեկտիվ ընթացքի իր դիտարկումներով, ինքն էլ չնկատելով, ըստ էության քանդում է իր իսկ առաջ քաշած «Արևելքի ու Արևմուտքի սինթեզի» տեսությունը, որն իր կարծիքով ընդունելի էր հայ գրականության ողջ պատմության համար։ Բայց, ինչպես տեսնում ենք, միջնադարյան հայ պոեզիան (ի միջի այլոց, և՛ ժողովրդական պոեզիան, և՛ նոր հայկական գրականությունը), չեն տեղավորվում այդ արհեստական սխեմայի մեջ³²։

Բրյուսովի հիմնական եզրակացությունն այն մասին, որ «միջնադարյան հայ քնարերգությունը հայկական ոգու իսկական հաղթանակն է համաշխարհային պատմության մեջ»³³, հաստատվում է նրա կողմից նաև հայ միջնադարի առանձին բանաստեղծների ստեղծագործությունը բնութագրելիս։ Այսպես, խոսելով Կոստանդին Երզնկացու «Բան դարնան» պոեմի մասին, Բրյուսովը նշում էր, որ իր զեղարվեստական արժանիքներով «այս պոեմը պատիվ կրերևր այդ դարի Արևմտյան Եվրոպայի ամեն մի գրականության, իսկ Եվրոպան նույնիսկ ոչինչ չունի դրան հակադրելու»։ Չնայած այն բանին, շարունակում է Բրյուսովը, որ հետագա հայ բանաստեղծները պարսիկներից ու արաբներից վերցնում էին որոշ թեմաներ և նրանց մշակման ձևերը, բայց և այնպես նրանք «գնացին իրենց ուղիով, շարունակելով երկու Երզնկացի երգիչների, մասամբ էլ մաղձոտ Ֆրիկի գործը»³⁴։ Ինչ վերաբերում է աշուղական՝ մասնավորապես Սայաթ-Նովայի պոեզիային, ապա Բրյուսովի կարծիքով, չնայած նրանում «զգացվում են պարսկական պոեզիայի արձագանքները»³⁵, այն նույնպես ժառանգում է ազգային ավանդույթները։

Նոր հայկական պոեզիայում Բրյուսովը գտնում է երկու հիմնական ազդեցություններ՝ արևմտաեվրոպական (արևմտահայ գրողների գործերում) և ռուսական (արևելահայ գրողների գործերում)։ Սակայն Բրյուսովը ճիշտ չէր, երբ սկզբունք ունենալով ազդեցությունների բնույթը, հայ միասնական գրականությունը կտրուկ կերպով բաժանում էր երկու «դպրոցների»։ Դա դարձյալ արվում էր ի հաճույս «Արևելքի ու Արևմուտքի սինթեզի» տեսության։

Բհարկե, սխալ կլիներ շտեմանել որոշակի տարբերություններ «արևմտյան» և «արևելյան» հայ գրողների լեզվի և ստեղծագործության մեջ։ Բրյուսովը չէր կարող հաշվի չառնել հայ գրականության դարգացման ողջ բարդություններն ու հակասությունները։ Բայց եթե հեռանանք նրա «սինթեզի տեսությունից», ապա նա շատ ղեկավարում նրբորեն նկատել է այս կամ այն գրականության ազդեցությունը հայ պոեզիայի վրա, այդ ազդեցությունը ինքնաբերական չհամարելով պոետների ստեղծագործության մեջ։ Այսպես, մեր կարծիքով, համոզիչ են Բրյուսովի դատողությունները Մ. Պեշկեթաշլյանի վրա՝ Հայնեի և Մյուսեի,

32 Ի դեպ, այդ տեսությունը տարածված էր Բրյուսովից շատ առաջ։ Այն ընդունել էին Ստեփաննոս Նաղարյանը իր «Նորագույն ժամանակների հայ գրականության պատմության տեսությունը» (1846) ուսերեն աշխատության մեջ և ավելի ուշ՝ Ն. Յա. Մառը, որի վրա հենվում է Բրյուսովը։

33 Վ ա լ ե թ ի Բ ռ յ ո ս ո վ, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, էջ 84։

34 Նույն տեղում, էջ 86։

35 Նույն տեղում, էջ 99։

Դուրյանի վրա՝ Հյուգոյի, Սիամանթոյի և Վարուժանի վրա՝ Վերհարնի, Ա. Զոպանյանի վրա՝ Բոդլերի և Վերլենի, Վ. Տերյանի ու Ա. Իսահակյանի վրա՝ արևմտաեվրոպական ու ռուսական սիմվոլիստների ազդեցության մասին և այլն:

Մտնելով իրեն անհայտ հայ պոեզիայի հարուստ աշխարհը, Բրյուսովը, բնականաբար, ձգտում ունեցավ նախ և առաջ այն համեմատության մեջ դնելու իրեն քաջ հայտնի անտիկ, արևմտաեվրոպական, ռուսական, ինչպես և արևելյան գրականությունների հետ: Հայ պոեզիայի համեմատական-տիպաբանական ուսումնասիրության ընթացքում Բրյուսովը ելնում էր իր իսկ առաջ քաշած այն դրույթից, թե որքան էլ ազգությունը դրել է իր կնիքը պոետի ստեղծածի վրա, համենայն դեպս համաշխարհային պոեզիայում կա ինչ-որ ընդհանուր բան: Հովհ. Հովհաննիսյանին գրած նամակում (ապրիլ 1916 թ.) նա ասում է. «Ես միշտ հավատացել եմ Պուշկինի բանաստեղծություններին:

Издревле сладостный союз
Поэтов меж собой связует...

Պոետները, վաղ ժամանակներից սկսած, և այդպես էլ կլինի հավիտյանս, ընդհուպ մինչև Բարատինսկու պատկերած «վերջին պոետը», կազմում են «գաղտնի ընկերություն», «հաճելի միություն» այս աշխարհում»³⁶:

Բրյուսովի հայագիտական աշխատություններում մենք գտնում ենք հայերի և այլ ժողովուրդների մշակույթների մի շարք հետաքրքրական տիպաբանական զուգադրումների վիաստեր: «Սֆինքսներ ու վիշապներ» հոդվածում, որ հատուկ գրված էր Բաքվում լույս ընծայվող «Գործ» հանդեսի համար (1917, № 5—6), Բրյուսովը խոսում է Վանում և Անդրկովկասում հայտնաբերված քարե «հրեշ-ձկների» (վիշապների) և հին Եգիպտոսում եղած «վիշապ-ձկների» քանդակների միջև առկա նմանության մասին³⁷: «Հայ ժողովրդի պատմական բախտի տարեգրությունը» գրքում Բրյուսովը ցույց է տալիս Վահագնի առասպելական կերպարի և հունական Հեռակլեսի ու պարսկական Ռոստոմի նմանությունը³⁸:

Ուշագրավ համադրում ենք գտնում նաև «Հայաստանի պոեզիան» ժողովածուին կցած Վ. Բրյուսովի հոդվածում: Այսպես, «Թափառական սյուժետների» դիրքերից է նա քննարկում «Ասլան Աղա» հեքիաթը: Ծանոթագրության մեջ Բրյուսովը համեմատում է այն Ադմետ թագավորի ու նրա կին Ալկեստի մասին ասքի հելլենիստական մշակման, ինչպես և այդ սյուժեի պարսկական ու արևելյան տարբերակների հետ³⁹:

Հայաստանի պատմությունն ու մշակույթը հետազոտելու ժամանակ Բրյուսովը ելնում էր եվրոպական դիտության մեջ մշակված տիպաբանական կատեգորիաներից՝ անտիկ աշխարհ, միջնադար, Վերածննդի ժամանակաշրջան, ռեալիզմ, սիմվոլիզմ և այլն: Բայց նա ձգտում էր հայկական պոեզիան արհեստականորեն «չխցկել» արևմտյան պոեզիայի «նորմաների» մեջ:

Հայ պոեզիայի վերաբերյալ Բրյուսովի աշխատությունները ընդարձակեցին Հայաստանի բանաստեղծական կուլտուրայի պատմության հորիզոն-

36 Վ ա լ ե Ր ի Բ Ր Յ Ո Ւ Ս Ո Վ, Հայաստանի ու հայ կուլտուրայի մասին, էջ 214:

37 Նույն տեղում, էջ 179—180:

38 Նույն տեղում, էջ 136:

39 Поэзия Арменин, под ред. Валерия Брюсова, изд. 3-е, Ереван, 1973, էջ 509:

ները, իսկ նրա արժեքավոր և նուրբ ուսումնասիրությունները այժմ էլ չեն կորցրել իրենց գիտական արժեքը:

Այս օրերին, երբ նշվում է Վալերի Յակովլևիչ Բրյուսովի ծննդյան 100-ամյակը, հայ ժողովուրդը շնորհակալությամբ է մեծարում իր հավատարիմ բարեկամի պայծառ հիշատակը:

ВАЛЕРИИ БРЮСОВ

(К 100-летию со дня рождения)

Доктор филологич. наук С. К. ДАРОНЯН

(Резюме)

В декабре 1973 г. исполнилось 100 лет со дня рождения Валерия Яковлевича Брюсова (1873—1924) — выдающегося русского поэта и ученого. Писатель сложной и трудной судьбы, он был вождем русского символизма. Преодолевая противоречия своего мировоззрения, Брюсов отходит от субъективной поэзии. Он приветствовал Великий Октябрь, активно участвовал в строительстве новой культуры. Брюсова связывала дружба с Арменией, ее культурой и литературой. Его антология «Поэзия Армении» — неувядаемый памятник содружества двух культур. Брюсов был глубоким исследователем армянской поэзии, ее связей с мировой литературой. При этом он применял сравнительно-исторический метод исследования и сделал ряд интересных выводов.